

ՀՀ ՓՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Գյուղատնտեսության զարգացման ու ընդլայնման համար անհրաժեշտ դրամական միջոցները հիմնականում կազմավորվում են սեփական և փոխառու աղբյուրների հաշվին: Հատկապես փոխառու աղբյուրների կազմում մեծ տեսակարար կշիռ և առաջնային նշանակություն ունեն վարկերը, որոնք վճռական դեր են կատարում գյուղատնտեսության ընդլայնված վերարտադրության զարգացման տեմպերի արագացման ու համապատասխան համամասնությունների ապահովման վրա: Վարկերի կիրառումը և վարկային համակարգի կատարելագործումը մեծապես նպաստում է ոչ միայն առանձին գյուղացիական տնտեսությունների, այլև ամբողջ տնտեսության առումով նյութական ու դրամական միջոցների օգտագործման արդյունավետության և, վերջին հաշվով, գյուղական բնակավայրերի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

Ինչպես գիտենք, գյուղատնտեսական արտադրությունը հայտնի է իր սեզոնային բնույթով, իսկ նյութական և դրամական միջոցների շրջապտույտը՝ արտադրական համեմատաբար տևական պարբերաշրջանով: Այդ առանձնահատկությունների առկայության հետևանքով տնտեսության ոչ մի ճյուղ վարկերի այնպիսի կարիք ու անհրաժեշտություն չի զգում, ինչպես գյուղատնտեսությունը: Ներկայումս, երբ գյուղատնտեսության բնագավառում տեղի են ունենում նկատելի բարեփոխումներ, հրամայական պահանջ է առաջանում ոչ միայն ընդլայնել վարկային գործընթացը, այլև էապես բարելավել վարկավորման գոյություն ունեցող համակարգը որպես միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման կարևորագույն պայման:

Ստացված վարկերը մեծամասամբ արտոնյալ են, ունեն վերադարձման մեծ ժամանակահատված և ցածր տոկոսավճար (տոկոսադրույքը 0.5-1.0 %, կամ քիչ ավելի): Սակայն տեղում առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների միջոցով դրանք վարկառուներին տրամադրվում են շատ ավելի կարճ ժամանակով և անհամեմատ բարձր տոկոսադրույքներով՝ մինչև 15-20 %:

Վերը շարադրվածը հիմք է տալիս հիմնավորելու այն կարևոր իրողությունը, որ ՀՀ գյուղատնտեսության զարգացման համար ֆինանսական միջոցներով ապահովվածության ամենափոքրագույն ուղին վարկային ռեսուրսների ավելացումն է և այդ հիմքի վրա էլ երկարաժամկետ վարկերի տրամադրման ընդլայնումը, իսկ ոչ վարկային այլ աղբյուրները հիմնականում ունեն մարդասիրական օգնության, նվիրատվության կամ բարեգործական ձև և իրենց բնույթով ու ոչ մեծ չափերով դրանք զգալիորեն կարող են օգտակար լինեն միայն դրա կարիքը զգացող որոշակի տնտեսությունների, բայց ոչ ընդհանուր գյուղատնտեսության համար: Ուստի դրանց ազդեցության հաշվառումը ֆինանսական շուկայում հավասարակշռված վիճակի ձևավորման հաշվարկներում հազիվ թե նպատակահարմար լինի:

Գյուղացիական տնտեսությունների զարգացմանն ուղղված արտասահմանյան վարկերի արդյունավետ օգտագործման նպատակով, կարծում ենք, օգտակար կլինի մեր հետևյալ առաջարկության իրականացումը՝ ստեղծել շահույթի նպատակ չհետապնդող (ծախսածածկման սկզբունքով աշխատող) միջնորդ կազմակերպություն՝ արտասահմանյան վարկերի սպասարկման պետական գրասենյակ, որի միջոցով համեմատաբար ոչ մեծ ծախսումներով արտոնյալ վարկերը հասցվեն գյուղացիական տնտեսություններին:

ՀՀ-ում գործող առևտրային բանկերը, եթե իրենց գործունեության սկզբնական շրջանում հիմնականում տրամադրում էին սպառողական վարկեր, ապա ներկայումս իրենց վարկային պորտֆելում հետզհետե ընդգրկում են նաև ագրարային հատվածը: Այսպես «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ բանկ» ՓԲԸ-ն ՀՀ գյուղատնտեսության վարկավորող առաջատար կազմակերպությունն է: Միայն 2007թ. հանրապետությունում տրամադրված գյուղատնտեսական վարկերի մեծությունը տարվա վերջի դրությամբ կազմել է 18.8 մլրդ. ՀՀ դրամ (ավելի քան 61.9 մլն. ԱՄՆ դոլար)¹, ինչը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը գերազանցում է 8.7 մլրդ. ՀՀ դրամով (ավելի քան 28.5 մլն. ԱՄՆ դոլար): Ներկայումս բանկը տրամադրում է ինչպես փոքր վարկեր՝ տնտեսապես ոչ բավարար մակարդակ ապահովող գյուղացիական տնտեսությունների սեզոնային կարիքների համար, այնպես էլ խոշոր վարկեր՝ արտադրված գյուղատնտեսական մթերքների վերամշակման կազմակերպման, ինչպես նաև գյուղական միջավայրում առկա գործունեության այլ ոլորտների համար, որը հնարավորություն է տալիս ծածկել գյուղացիական վարկավորման ողջ գործընթացը:

Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ագրարային հատվածի վարկավորումը ՀՀ-ում դանդաղ է զարգանում, որը պայմանավորված է մի շարք գործոններով, այդ թվում՝

1. վարկային բարձր տոկոսադրույքների առկայություն.

Գյուղատնտեսական վարկերի միջին տոկոսադրույքը հանրապետությունում ներկայումս կազմում է 16 %, որը բավականին բարձր է և չի նպաստում վարկավորման զրավայությանը, քանի որ ագրարային ոլորտում տնտեսական գործունեությունը առանց այն էլ դրսևորվում է ցածր շահութաբերությամբ: Ուստի վարկավորման հարցում առաջարկում ենք տոկոսային տարբերակում մտցնել տնտեսավարման տարբեր ոլորտների համար: Մասնավորապես, նպատակահարմար ենք համարում բարձր շահութաբերություն ապահովող ոլորտների (առևտուր, շինարարություն) համար բանկերի կողմից վարկավորման ցածր տոկոսադրույքների աճի հաշվին իջեցնել տրամադրվող գյուղատնտեսական վարկերի տոկոսները: Արդյունքում, մի կողմից ֆերմերները կստանան ցածր տոկոսներով վարկային պարտավորություններ, և դրանով իսկ կաշխուժման ագրարային ոլորտին տրվող փոխառությունները, իսկ մյուս կողմից էլ առևտրային բանկերը գյուղատնտեսական վարկերի ցածր տոկոսադրույքներից իրենց կորուստները կփոխհատուցեն այլ ոլորտներում վարկային տոկոսների ծավալային աճով:

2. Փողի երկարաժամկետ բացակայություն.

Համարելով ագրարային ոլորտը չափազանց ռիսկային, բանկերը ներկայումս հրաժարվում են գյուղատնտեսական երկարաժամկետ վարկեր տրամադրելուց: Սակայն, ագրոբիզնեսի առանձնահատկություններից մեկը ֆինանսական ներդրումների և դրանցից ստացվող արդյունքների միջև 1 տարուց ավելի ժամանակահատվածն է: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղացիական տնտեսությունները պարզապես ի վիճակի չեն լինում վերադարձնելու կարճաժամկետ վարկերը, քանի որ սպասվելիք արդյունքներից նշանակալի եկամուտներ, որպես կանոն, ստանում են միայն 2-3 տարի անց: Ուստի ագրարային հատվածի երկարաժամկետ վարկավորումը խթանելու համար նպատակահարմար ենք համարում գյուղացիական տնտեսությունների վարկունակության գործոնից բացի, բանկերում լրացուցիչ հաշվի առնել նաև պետության կողմից ներկայացվող երաշխիքները:

3. Ռիսկային գործոնի առկայություն².

Գյուղատնտեսության ոլորտում առկա ռիսկայնության հիմնական պատճառներն են՝

- բարձր ֆինանսական անկայուն վիճակ,
- գյուղատնտեսության ոլորտին հատուկ երկարաժամկետ գումարների պահանջ և առևտրային բանկերի կողմից առաջարկվող կարճաժամկետ ու սահմանափակ ռեսուրսներ,

¹ ACBA-CREDIT AGRICOLE 2007թ տարեկան հաշվետվություն էջ 17:

² "Agriculture Risk Protection Act 2000", Risk Management Agency, Washington D.C., June 2000, www.Rma.com.

- գյուղատնտեսության գործունեության կարգավորման հետ կապված առանձին ցուցանիշների կատարման գծով թերացումներ,
- գյուղատնտեսության ոլորտի սեզոնայնություն,
- գյուղատնտեսական մթերքների իրացման հետ կախված դժվարություններ,
- ՀՀ ներհատուկ բնակլիմայական խիստ անկայունություն:

4. Պետության կողմից գյուղատնտեսական ռիսկի աստիճանի նվազեցում.

Իմաստը կայանում է նրանում, որ պետությունը ուղղակիորեն պետք է միջամտի գյուղատնտեսական վարկերի երաշխավորման գործընթացին և դրանով իսկ նվազեցնի ագրարային ոլորտում բանկերի ֆինանսական միջոցների տեղաբաշխման ռիսկայնությունը: Ընդ որում, այս ոլորտում պետական միջամտությունը հանդես է գալիս ուղղակիորեն և անուղղակիորեն: Առաջինի դեպքում գյուղատնտեսական վարկերի գծով պետության կողմից տրամադրվում են հարկային և ֆինանսական արտոնություններ, իսկ երկրորդի դեպքում՝ պետությունը իր կողմից սահմանված բաժնեչափով բանկերին փոխհատուցում է գյուղատնտեսական անհուսալի վարկերից ձևավորված վնասը՝ այդ նպատակով կառավարության մակարդակով ստեղծված պահուստահիմնադրամի հաշվին:

5. Ագրարային հատվածի ապահովագրության բացակայություն.

Ապահովագրությունը ագրոբիզնեսի կայուն զարգացման կարևորագույն երաշխիքն է, սակայն, մեր հանրապետությունում ագրարային ոլորտի ապահովագրական գործը դեռևս չի զարգանում: Դրան հիմնականում խոչընդոտում են մի կողմից գյուղատնտեսության բարձր ռիսկայնությունը, իսկ մյուս կողմից, ֆերմերների դրամական միջոցների մշտական պակասը: Մանր գյուղացիական տնտեսությունների դրամական միջոցները չեն բավարարում սերմացու, անասնակեր, դեղամիջոցներ ձեռք բերելու համար և դրանով իսկ ապահովագրական մոծումները գործնականում դառնում են անհնար: Այս պարագայում, խիստ բարձրանում է ֆերմերային տնտեսությունների վարկավորման ռիսկայնությունը, քանի որ բանկերը երկարաժամկետ հատվածում գյուղմթերքների արտադրությունից նշանակալի եկամուտների երաշխիքներ չեն տեսնում:

1997 թ. «Ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումից հետո¹ ՀՀ գյուղատնտեսության նախարարության միջնորդությամբ ստեղծվեց «Հայգյուղապահովագրություն» փակ բաժնետիրական ապահովագրական ընկերություն, որի 1 տարվա գործունեության արդյունքում ապահովագրական հատուցումների կատարման գծով վնասները մեծ ծավալների հասան և հիմնականում այդ պատճառով էլ ընկերության հետագա գործունեությունը դադարեցվեց, ուստի ակնհայտ դարձավ, որ այս հանգամանքը կարող էր գործել միայն գյուղատնտեսական ռիսկերի վերաապահովագրության համակարգի մշակման և ներդրման պայմաններում: Արդյունքում աստիճանաբար ավելի խորացրեց ապահովագրական գործի նկատմամբ տնտեսավարող սուբյեկտների անվստահությունը, ինչի պատճառով էլ ներկայումս նրանք հրաժարվում են ապահովագրությունից, իսկ գյուղատնտեսական ապահովագրության համակարգը շարունակում է մնալ անկատար: Ներկայումս, կապված բարձր ռիսկայնության հետ, գյուղատնտեսական ոլորտում ապահովագրություն չեն ձգտում իրականացնել նաև գործող ապահովագրական կառույցները:

6. Գրավադրման դժվարություններ.

Գյուղատնտեսության ճյուղերի վարկավորման դեպքում գրավների ապահովումը հայ գյուղացու համար հանդիսանում է դժվարագույն խնդիր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանկերը շատ խիստ են վերաբերվում այս հարցին, ուստի մեծ գումարի վարկեր ստանալը գյուղացիական տնտեսություններից շատերի համար դառնում է անհնարին: Եվ, եթե հաշվի առնենք մի հանգամանք ևս, որ գյուղատնտեսությունը համարվում է ամենառիսկային

¹ W.W.W. Parliament.am

բնագավառներից մեկը, ապա առավել պարզ է դառնում, որ այն բանկերը, որոնք վարկավորում են այս բնագավառը, պարտավոր են առավել խիստ վերաբերել գրավով ապահովվածության խնդրին: Գրավը վարկ տրամադրելիս դարձել է առաջնային և բավականին լուրջ պահանջ: Շատ հաճախ որևէ սուբյեկտի վարկավորելու ժամանակ նորմալ գրավ ապահովելու դեպքում վարկի օգտագործման նպատակայնությունը մղվում է երկրորդ պլան: Կան բանկեր, որոնց համար գրավի առարկան հանդիսանում է միայն թանկարժեք մետաղներ կամ բնակարան՝ այն էլ միայն Երևանի կենտրոնում, կամ էլ նոր ավտոմեքենա: Եթե հաշվի առնենք, որ Հայաստանում չկա կոնկրետ ձևավորված հողի շուկա, ապա խնդիրն ավելի է բարդանում:

ACBA բանկը գործունեության հենց սկզբից առաջին վարկերի տրամադրման ժամանակ գրավների համակարգում շեշտը դրել է մեքենա-մեխանիզմների գրավադրման վրա, որը դրսևորել է բավականին բարձր արդյունավետություն: Հետագայում գրավի առարկա դարձան նաև հողը, գյուղգործիքները, բնակարանները, շինությունները (հիմնականում անասնագոմերը), անասունները, իսկ որոշ դեպքերում նաև գյուղի տները: Հարկ է նշել, որ բանկը շարժական գույքի (ավտոմեքենա, տրակտոր, գյուղտեխնիկա, մեխանիզմներ, գյուղգործիքներ, անասուններ և այլն) հիփոթեքի պայմանագիրը կնքում է 3 տարով, ըստ որի վարկառուներին տրվում է «սահմանված որոշակի գումարի վարկ» ստանալու հնարավորություն, որի սահմաններում էլ նրանք կարող են այդ ամբողջ ժամանակահատվածի ընթացքում առանց լրացուցիչ ծախսեր կատարելու ստանալ վարկերը:

Մեքենա-մեխանիզմների գրավադրումը ամենահարմար ձևն է և կատարվում է շատ կարճ ժամանակամիջոցում, որը ձեռնտու է և վարկառուին, և գրավատուին: Շարժական գույքի հիփոթեքի պայմանագրի կնքումը և վերոնշյալը հաշվի առնելուց բացի գրավի այս տեսակը ձեռնտու է նաև պետական տուրքերի տեսանկյունից. նոտարական ծախսերը ավելի է ժամ են, քան անշարժ գույքի հիփոթեքի պայմանագրի կնքման ժամանակ: Գյուղտեխնիկաների և մեխանիզմների գրավադրման ժամանակ հնարավոր է նրանց հետ գրավ վերցնել նաև գյուղգործիքները, որը դիտարկվում է որպես մեկ առանձին լրացուցիչ գրավ: Բացի այդ, գրավ են վերցվում նաև անասունները, որոնք նույնպես համարվում են լրացուցիչ գրավ:

Բնակարանների, առանձնատների, շինությունների գրավադրումը, բացի գրավադրման երկար գործընթացից, նաև ծախսատար է: Շինություններից գրավադրվում են անասնագոմերը, ձկնալճերը, ջերմոցները, սակայն վերջին երկուսը պատահական բնույթ ունեն: Առանձնատները որպես գրավ են վերցվում հիմնականում քաղաքային բնակավայրերում, որտեղ դրանք առավել արժեքավոր են և վարկը չմարելու դեպքում իրացման դժվարություններ չեն առաջացնի: Մեծամասամբ գրավի այս տեսակը նույնպես դիտարկվում է որպես լրացուցիչ գրավ և կարող է բավարարել գրավի մինչև 50 %:

Հարկ է նշել, որ Համաշխարհային բանկը և միջազգային այլ ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից ՀՀ-ում ներդրումներ կատարելու դեպքում կառավարությունը տալիս է իր համաձայնությունը և հանդես է գալիս երաշխավորողի դերում: Հետևաբար ինչու՞ պետությունը չպետք է լինի որպես երաշխավորող՝ զարգացող ֆերմերային տնտեսությունների համար, երբ վարկ վերցնելու դեպքում պահանջվող գրավները ոչ լիարժեք բավարար լինեն: Նման պայմաններում կարծում ենք, որ բոլոր բանկերն էլ կվարկավորեն տվյալ ֆերմերային տնտեսությանը: Պետական երաշխիքի համար որպես գրավ պետք է առաջարկվի տվյալ տնտեսության, կամ արտադրության պատրաստի արտադրանքը (օրինակ, խոշոր անասնապահական տնտեսության արտադրանքը՝ կաթ, միս, պանիր, յուղ): Այս դեպքում տնտեսությունը չունենալով համապատասխան պահանջվող գրավի առարկաներ, պետության կողմից երաշխավորվելով, կարող է ստանալ անհրաժեշտ դրամական միջոցներ և ներդնել իր տնտեսության մեջ: Վարկ ստացողը միաժամանակ պետք է պարտավորվածություն ունենա պետության հանդեպ՝ վարկի գումարը չվերադարձնելու, կամ ոչ նպատակային օգտագործելու դեպքում: Տվյալ դեպքում նա

պետք է գիտակցի, որ ռիսկի տակ է դնում իր տնտեսության հետագա գործունեությունը: Վարկը չմարելու դեպքում գյուղացիական տնտեսության ունեցվածքը անցնելու է պետության ձեռքը, որով և կմարվի նրա ամբողջ պարտավորությունը պետության հանդեպ: Պետությունը պետք է առանձնահատուկ վերաբերմունք և մոտեցում ունենա մաս ֆորսմաժորային իրավիճակների համար (բնական աղետներ, կորուստներ, պատահարներ և այլն): Այս դեպքում ցանկալի է, որ մշակվի առողջացման ծրագիր, որով հնարավորություն կտրվի վերականգնել տնտեսության վիճակը:

Գյուղատնտեսական վարկերի ծավալների աճին մեծապես նպաստեց 2004 թ. հունվարին «ԱԿԲԱ- ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ կողմից պարզեցված գրավադրմամբ գյուղատնտեսական վարկերի ներդրումը¹: Այն նպատակաուղղվեց այն վարկունակ հաճախորդ տնտեսությունների համար, որոնք ունեն գրավադրման դժվարություններ: Այս դեպքում, որպես ապահովվածություն կարող են հանդես գալ գյուղատնտեսական կենդանիները, շրջանառու միջոցները, տան գույքը՝ առանց նոտարական վավերացման, ինչպես նաև անձնական երաշխավորությունները: Այս վարկատեսակը զգալիորեն թեթևացնում է վարկի տրամադրման տեխնոլոգիան, բարձրացնում է բանկի աշխատակիցների աշխատանքի արտադրողականությունը: 2006 թ. վերջերին ներդրվեց նոր գյուղատնտեսական վարկեր ավելի արագացված և պարզեցված կարգով, ինչպես նաև քարտային հաշվի գյուղատնտեսական վարկային գծեր, որոնց նպատակն է գյուղացիական տնտեսություններին մատչելի գործընթացով և առանց ավելորդ փաստաթղթատարության՝ փոքր գյուղատնտեսական վարկերի և վարկային գծերի տրամադրումը:

7. Լիզինգը որպես ագրարային հատվածի երկարաժամկետ վարկավորման արդյունավետ միջոց:

Ինչպես գիտենք, երկարաժամկետ վարկավորումը առավել ռիսկային է և ուղեկցված առևտրային բանկերի, կամ վարկային կազմակերպությունների կողմից միջոցների խոշոր ներդրումներով, որին նպաստում է ֆինանսական վարձակալությունը, կամ այլ կերպ լիզինգը:

Ներկայումս առևտրային բանկերում վարձակալական գործառնությունները եզակի երևույթ են: Վարձակալական գործառնությունների զարգացումը խթանելու համար առևտրային բանկերում համակարգված միջոցառումներ չեն իրականացվում: Դրանք լայնամասշտաբ կիրառություն են գտել միայն ACBA բանկի կողմից 2002թ. ֆինանսական տարում, որը նպաստել է միայն ՀՀ գյուղատնտեսական ոլորտի զարգացմանը:

ՀՀ առևտրային բանկերը հավելյալ եկամուտ ստանալու համար շատ հազվադեպ են դիմել որպես երկարաժամկետ վարկավորման գործիք՝ ֆինանսական վարձակալման օգնությամբ: Դա հիմնականում բացատրվում է նրանով, որ տվյալ գործարքից ստացվելիք եկամուտը, սկսած 2001թ. ֆինանսական տարվանից հարկվում էր ԱԱՀ-ով: Ներկայումս, երբ այդ արտոնությունը վերականգնվել է, վարձակալության կիրառումը հաճախակի կդառնա, սակայն դրա ոլորտային ուղղվածության կարգավորումը ՀՀ կառավարության խնդիրն է:

Նշենք նաև, որ մինչև 2003թ. ֆինանսական տարին այն ժամանակաշրջանն էր, երբ ֆինանսական վարձակալության նկատմամբ վերահսկողությունը փոխանցվեց ՀՀ Կ/Բ-ին, ՀՀ տարածքում վարձակալական գործառնությունների միակ առաջատարը Ագրոլիզինգ կազմակերպությունն էր, որը կոչված է զարգացնելու ՀՀ գյուղատնտեսությունը: Տվյալ կազմակերպությունը իր գործունեությունը իրականացնում էր ԱՄՆ միջազգային օգնության շրջանակներում, և այդ իսկ պատճառով դրա եկամուտը ԱԱՀ-ով չէր հարկվում: Հիմնադրման օրվանից կազմակերպությունն իրականացնում է ԱՄՆ կառավարության կողմից Հայաստանում իրագործվող Լիզինգային ծրագիրը: Կազմակերպության հիմնական գործընկերն է ԱՄՆ գյուղեկալարտամնտի մարքեթինգի աջակցության կազմակերպությունը: Կազմակերպությունը լիզինգային ծառայություններ է մատուցում գյուղատնտեսության և սննդարդյունաբերության տարբեր

¹ ACBA 2005 թ. տարեկան հաշվետվություն, էջ 28:

ոլորտներում գործող իրավաբանական անձանց (գյուղատնտեսական հումքի վերամշակում, գինեգործություն, պանրագործություն, կաթնամթերքի, մսամթերքի արտադրություն և այլն):

ՀՀ-ում ներկայումս լիարժեք գործում են 2 վարձակալական (լիզինգային) կազմակերպություններ՝ «Ագրոլիզինգ» և «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպությունները¹, իսկ առևտրային բանկերում վարձակալական գործառնությունները եզակի երևույթ են, և դրանց զարգացումը խթանելու նպատակով համակարգված միջոցառումներ չեն իրականացվում: Այդպիսի գործառնությունները լայնածավալ կիրառություն են գտել միայն Գյուղացիական փոխօգնության բանկի կողմից 2002թ. ֆինանսական տարում, որը նպաստել է ՀՀ գյուղատնտեսական ոլորտի զարգացմանը:

Մեծ է նաև գյուղատնտեսական տեխնիկայի նորացման խնդրի լուծման հարցը հանրապետությունում: Ինչպես պարզել ենք, հայ գյուղացին իրեն չի կարող թույլ տալ միջոցների սղության պայմաններում ձեռք բերել առավել հարմարավետ, բայց մեծ արժեք ունեցող գյուղտեխնիկա:

Պարզ է, որ առաջիկա փուլում, գյուղատնտեսական համալիր զարգացումը պայմանավորված կլինի գլխավորապես նոր տեխնիկական միջոցների կիրառմամբ, նյութատեխնիկական բազայի նորացմամբ, ինչպես նաև որոշ տեսակի գյուղատնտեսական տեխնիկա արտադրող կազմակերպությունների գործարկմամբ: Ստեղծված իրավիճակում, կարծում ենք, որ հանրապետության գյուղատնտեսության բնագավառում տեխնիկական քաղաքականության հիմնական ուղղությունները կարող են հանդիսանալ հետևյալները.

- տարածաշրջանների բնակլիմայական պայմանների առանձնահատկություններից և մշակահողերի մեծությունից ելնելով մշակել գյուղատնտեսական արտադրության համար անհրաժեշտ առաջադիմական տեխնոլոգիաների և մեքենասարքավորումների նախագծեր, որոնք հնարավորություն կընձեռեն գյուղատնտեսական գործունեությանը զբաղվողներին ստանալ համեմատաբար էժան և մրցունակ արտադրատեսակներ,
- գյուղատնտեսական արտադրությունների տեխնոլոգիաների գործընթացներն իրականացնելու և դրանք անհրաժեշտ քանակի մեքենաներով ապահովելու ուղղությամբ կիրառել պետական հովանավորչություն,
- խթանել օտարերկրյա ներդրողներին գյուղատնտեսական մեքենաներ ու սարքավորումներ արտադրող համատեղ կազմակերպությունների ստեղծման նպատակով:

Գյուղատնտեսական արտադրության համար անհրաժեշտ առաջադիմական տեխնոլոգիաների և մեքենասարքավորումների նախագծերի մշակումը և դրանց կյանքի կոչումը պետք է հանդիսանա տնտեսության այս ճյուղում պետության տնտեսական քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը:

Հատկապես արդյունավետ և առաջադիմական ուղի պետք է համարել գյուղատնտեսական տեխնիկայի ուղղությամբ իրականացվող լիզինգը:

Միջոցառման հիմնական նպատակն է օժանդակել առաջին հերթին գյուղատնտեսության ճյուղում կազմակերպություններին և գյուղացիական տնտեսություններին, կոլեկտիվ միավորումներին միջնաժամկետ ֆինանսավորման միջոցով ձեռք բերելու սարքավորումներ և արտադրական միջոցներ: Ըստ ընտրված ռազմավարության այդ կազմակերպության կողմից լիզինգի առարկա կարող են հանդիսանալ.

1. բեռնատար ավտոմեքենաներ, ավտոբուսներ, միկրո ավտոբուսներ և այլն
2. գյուղատնտեսական տրակտորներ, շինարարության մեջ օգտագործվող անվավոր սարքավորումներ և տպագրական սարքեր,
3. գյուղատնտեսական մեքենաներ, սառնարանային սարքավորումներ, արդյունաբերական մեքենաներ (թեթև արդյունաբերություն, փայտամշակում և այլն), բժշկական, անաս-

¹ Հայաստանի ֆինանսական ոլորտի զարգացման ծրագիր-լիզինգ, նոյեմբերի 8, 2007թ., USAID:

նաքուժական և այլ սարքավորումներ:

Այսպիսով, ելնելով վերոնշյալներից կարող ենք ներկայացնել այն գործոնները, որոնք խոչընդոտում են գյուղատնտեսական վարկավորման գործընթացին: Դրանք են գյուղատնտեսությանը բնորոշ ռիսկայնության բարձր մակարդակը, բանկերի կողմից ընդունելի գրավի բացակայությունը կամ ոչ բավարար ծավալները, բարձր տոկոսադրույքները, գյուղատնտեսությունում ապահովագրության բացակայությունը և վարկի ստացման գործընթացում առկա բյուրոկրատական բաշքշուկները:

ՍՄԲԱՏ ԱՂԱՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ՀԱՅ-ԹՈՒՐԶԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ¹ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ, ԹԵ ԹՈՒՐԶԱԿԱՆ ԷԶՍՊԱՆՍԻԱ

Հայաստանին արևմուտքից սահմանակից հարևան պետություններից է Թուրքիան, որը սկսած 1993թ. փակ է պահում Հայաստանի հետ իր ունեցած սահմանը և խզել է դիվանագիտական հարաբերությունները, որը հակամարտության արդյունք է և սկիզբ է դրվել Թուրքիայի կողմից ու մինչ օրս շարունակում է իրականացնել Հայաստանի ու հայության դեմ ուղղված իր քաղաքականությունը առանց լուրջ փոփոխությունների: Հայաստանին և հայությանը առավելագույն վնաս հասցնելու նպատակով, թուրքական կողմը շարունակում է տարբեր տեսակի ճնշումներ իրականացնել և որպես հակամարտության խորոցման միջոց ել օգտագործել նաև տեղեկատվական և հոգեբանական ոլորտները: Այդ է պատճառը, որ եվրոպական ատյաններն ուշադրություն են դարձնում ոչ միայն Թուրքիայի ներքին խնդիրներին, այլ նաև արտաքին աշխարհի հետ իր ունեցած կապերին:

Հայաստանի աշխարհագրական դիրքը, արևելյան և արևմտյան սահմանների փակ լինելը, հյուսիսից հարևան երկրի կողմից վարվող անկայուն քաղաքականությունը, անխոս սահմանափակում են առևտրատնտեսական հարաբերությունների կառուցվածքում կոմունիկացիոն հնարավորությունների դերը, որը բացասական ազդեցություն է թողնում ՀՀ տնտեսության վրա: Կենսական նշանակություն ունեցող տրանսպորտային կապը հանդիսանում է արտաքին աշխարհի հետ կապ հաստատելու միակ միջոցը, որի ծախսերը կարևոր դեր ունեն առևտրային հոսքերը գնահատելիս: Ազդեցիկ դիրքերից և նախապայմաններով խոսելու կեցվածքով, թուրքական կառավարությունը գերազանց հասկանում է դա և շարունակում է այն քաղաքական սակարկությունների պատանդ դարձնել: Ուստի թուրքական կողմի ստեղծած իրավիճակը, կարելի է համարել քաղաքական պարտադրանքներով ճնշում ՀՀ ինքնամույնականացման տարրերի վրա, որին սնուցող ներուժը, թուրքական կողմը անուղակիորեն ձեռք է բերում աշխարհաքաղաքական հզոր ուժերի շահերը տարածաշրջանում սպասարկելու գործընթացից:

Սահմանների փակ լինելու փաստը, անխոս, այնքանով էլ միանշանակ չէ. տվյալ ժամանակահատվածում պետական վերահսկողությունից դուրս Թուրքիան Հայաստանի հետ իրակա-

¹ Հայ-թուրքական առևտրատնտեսական հարաբերությունների շարադրանքի հիմքում ընկած է տ.գ.դ., պրոֆեսոր Թ.Թորոսյանի գիտական աշխատությունները՝ հատկապես «Հայաստան-Թուրքիա առևտրատնտեսական կապերը», Երևան, 2001թ.: